ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/28.3/1579-12
«30» 03 2012 թ

Ձեր № 2012-03-21, 165-ի 7

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2009 և 2010 թվականներին ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար կայքէջեր չեն ստեղծվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ կատարվել են որոշակի աշխատանքներ ՀՀ էկոնոմիկայի նախարարության առանձնացված ստորաբաժանում հանդիսացող ՀՀ մտավոր սեփականության գործակալության պաշտոնական կայքէջի (http://www.aipa.am) արդիականացման, կայքում նոր համակարգերի ներդրման, այդ թվում՝ հայտերի էլեկտրոնային եղանակով ներկայացման, ուղղությամբ:

Նշված աշխատանքների իրականացման համար «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում արտաբյուջետային միջոցների հաշվին» ծրագրով 2009թ. հատկացվել է 3280 հազար դրամ, իսկ 2010թ.՝ 1920 հազար դրամ:

2011թ-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջի (mineconomy.am) նոր տարբերակի մշակման, ինչպես նաև armenia.am կայքի ստեղծման և հետագա սպասարկման համար «Գործադիր իշխանության, պետական կառավարման

Կատարող՝ Աննա Քոչարյան
59-72-10

հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում արտաբյուջետային միջոցների հաշվին» ծրագրով հատկացվել է 4650.0 հազար դրամ: Նշված կայքերը ստեղծված են և գտնվում են լրամշակման փուլում:

Հարգանքով՝

ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆ